ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-2/ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.08.2014
Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ
Հայտատու՝ Ոսկեհատի գյուղապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-2/ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Առաջատար մասնագետ (3.1-2):

- Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը:

-Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում իր լիազորությունների սահմաններում.

- Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է Աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրական ակտերի առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

- Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակացում է Աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին. -Իրականացնում է Աշխատակազմի քարտուղարի մոտ ընդունելության համար քաղաքացիների հերթագրումը.

- Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականցնում է դրամական միջոցների մուտքագրման, դուրս գրման, այդ թվում աշխատավարձի դրամական գործառույթներ:

- Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է:

- Միջնակարգ կրթություն

- Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

Ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2014թվականի սեպտեմբերի 19-ին, ժամը 11 :00 –ին՝ Ոսկեհատի գյուղապետարանի շենքում / հասցե՝ գ. Ոսկեհատ, Մաշտոցի 43:

Դիմող ՀՀ քաղաքացիները գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փսփտաթղթերը.
-դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնորինակների հետ միասին,
- հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,
- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանանչվել անգործունակ, կամ սահմանափակ գործունակ,
- արական սեռի անձինք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները,

- մեկ լուսանկար 3x4 չափսի

- անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի Մարզի Ոսկեհատի (Էջմիածնի տարածաշրջան) գյուղապետարան: ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցեն ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ., 0237-2-76-49, 2-08-70):
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից 16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2014 թվականի օգոստոսի 29-ը ներառյալ:
Գ.Ոսկեհատ
2014 օգոստոսի 13

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ.Ոսկեհատ, Մաշտոցի 43

Հեռ..՝ 231-5-29-35

Էլ. փոստ՝ SOVXOZ444@mail.ru

ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ
Համայնքներ